

Ծանուցում

Անսաթիվ. Հոկտեմբերի 25, 2016

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՁՆԻ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

Ուղղված է. Բարձրագույն իշխանություններին, տարածքային յոթանասունականներին, ցցերի, միսիաների և շրջանների նախագահներին, եպիսկոպոսներին և ճյուղերի նախագահներին, ցցի և ճյուղի խորհրդի անդամներին

Ում կողմից. Քահանայության և ընտանեկան գործադիր խորհուրդ (801-240-2134)

Թեմա. Ծանուցում. 25 հոկտեմբերի 2016. Հոգալ նույն սեռի հանդեպ հակվածություն ունեցող մարդկանց մասին

Եկեղեցու անդամների, ընտանիքների և ծխի խորհուրդների համար այժմ հասանելի են թարմացված նյութեր նույն սեռի հանդեպ հակվածության վերաբերյալ:

- «Նույն սեռի հանդեպ հակվածություն» բառահոդվածը Ավետարանական թեմաներ կայքում LDS.org (կցված է այս ծանուցմանը)
- Եկեղեցու ուսմունքները (կցված է այս ծանուցմանը)
- Հաճախակի տրվող հարցեր (կցված է այս ծանուցմանը)
- Mormonandgay.lds.org կայքը, որը հասանելի է անգլերեն լեզվով
- Սպասավորման նյութեր (ministering.lds.org). Ղեկավարների և գործավարների ռեսուրսների միջոցով LDS.org կայքում 10 լեզվով հասանելի է անդամների և ծխի ու ցցի խորհուրդների համար:

Այդ նյութերին կարելի է ծանոթանալ ցցի կամ ծխի խորհրդի ժողովներին:

Նույն սեռի հանդեպ հակվածություն

Հոկտեմբերի 25, 2016

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՁԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

Հետևյալ կայքի ամենաարևմտյան թեմաներից. topics.lds.org

Նույն սեռի հանդեպ հակվածությունը վերաբերում է նույն սեռի անձի հանդեպ առկա հուզական, ֆիզիկական, ռոմանտիկ կամ սեռական հրապուրանքին: Նույն սեռի հանդեպ հակվածությունը նույն կերպ չի արտահայտվում բոլորի մոտ: Ոմանք հակվածություն են զգում բացառապես նույն սեռի հանդեպ, մինչդեռ մյուսները կարող են հակվածություն զգալ թե՛ մեկ, թե՛ մյուս սեռի հանդեպ:

Եկեղեցին տարբերություն է դնում նույն սեռի հանդեպ հակվածություն ունենալու և համասեռամոլ վարքագծի միջև: Նույն սեռի հանդեպ հակվածություն ունեցող կամ իրենց նույնասեռական, լեսբուի կամ երկսեռական համարող մարդիկ կարող են Աստծո հետ ուխտեր կապել ու պահել և լիարժեք ու արժանի մասնակցություն ունենալ Եկեղեցում: Նույնասեռական, լեսբուի կամ երկսեռական համարվելը կամ նույն սեռի հանդեպ հակվածություն զգալը մեղք չէ և ինքնին չի արգելում, որ մարդը արժանի մասնակցություն ունենա Եկեղեցում, կոչում կրի կամ այցելի տաճար:

Սեռական անարատությունը Աստծո ծրագրի էական մասն է մեր երջանկության համար: Սեռական հարաբերությունները վերապահված են տղամարդու և կնոջ համար, որոնք ամուսնացած են և խոստանում են մինչև վերջ հավատարիմ մնալ միմյանց: Չամուսնացած տղամարդու և կնոջ, կամ նույն սեռի մարդկանց միջև սեռական հարաբերությունը մեղք է և խախտում է մեր Երկնային Հոր կարևորագույն օրենքներից մեկը և խոչընդոտում է հավերժական առաջընթացի մեր ճանապարհը: Ապաշխարությունը և Աստծո հետ հաշտությունը հնարավոր է սեռական ցանկացած կողմնորոշում ունեցող մարդու համար, ով խախտել է մաքրաբարոյության օրենքը: Որպես Քրիստոսի հետևորդներ, մենք դիմակայում ենք անբարո վարքին և ջանում ենք նմանվել Նրան: Մենք ձգտում ենք Սուրբ Հոգու առաջնորդությանը և Փրկիչի օգնությանը, ով գիտի ինչպես սատարել մեզ, երբ գայթակղվում ենք (տես Ա Կորնթացիս 10.13, Վևու 62.1): Եթե տեղի ենք տվել սեռական գայթակղություններին և խախտել ենք մաքրաբարոյության օրենքը, մենք կարող ենք ապաշխարել, ներվել և վերադառնալ Եկեղեցու լիակատար անդամակցությանը:

Մենք կարող ենք ճշգրիտ չիմանալ, թե ինչու են որոշ մարդիկ հակվածություն զգում նույն սեռի մարդկանց հանդեպ, բայց ոմանց համար այն բարդ իրողություն է և մարդկային կյանքի փորձության մասն է: Փրկիչ Հիսուս Քրիստոսը կատարյալ պատկերացում ունի այս Երկրի վրա մեր ունեցած յուրաքանչյուր մարտահրավերի մասին և մենք կարող ենք դիմել Նրան մխիթարության, ուրախության, հույսի և ուղղորդության համար (տես Ավմա 7.11–12): Անկախ նրանից, թե ինչ փորձություններով ենք անցնում կյանքում, մենք բոլորս Աստծո զավակներ ենք՝ արժանի միմյանց բարությանը և կարեկցանքին (Հռովմայեցիս 8.16–17): Ստեղծելով բարենպաստ միջավայր, մենք միմյանց հանդեպ գթության և կարեկցանքի հիմքն ենք դնում և շահում ենք մեր համակցված հեռանկարներից և հավատքից:

Եկեղեցու ուսմունքները

Հոկտեմբերի 25, 2016

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՁԻՆ ՕՐԵՐԻ ՍՐՔԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

Կայքի անվանումը. mormonandgay.lds.org

Աստված սիրում է Իր բոլոր զավակներին

Ոչինչ ավելի լիարժեք ցույց չի տալիս Աստծո սիրո խորությունը և հասանելիությունը, քան Իր պատրաստակամությունը՝ զոհաբերելու Իր Որդուն, որ մենք՝ Նրա զավակները, կարողանանք հաղթահարել մահը, և մեզ առաջարկվի հավերժական կյանք: «Որովհետև Աստուած այնպես սիրեց աշխարհքը, որ իր միածին Որդին տուավ. որ ամեն նորան հավատացողը չկորչի, այլ հավիտենական կյանքն ունենա» (Հովհաննես 3.16): Ոչինչ ավելի լավ չի արտահայտում Հիսուս Քրիստոսի սերը, քան Իր պատրաստակամությունը՝ Իր կյանքը տալու մարդկության մեղքերի քավության համար, որպեսզի փոխհատուցի ողջ տառապանքի և անարդարության դիմաց և կոտորի մահվան կապանքները բոլորի համար (տես Սլմա 7.11–13): «Ոչ ով նորանից անելի մեծ սեր չունի, որ մեկն իր անձը դնէ իր բարեկամների համար» (Հովհաննես 15.13):

2009թ. հոկտեմբերի գերագույն համաժողովի իր ելույթում Նախագահ Դիտեր Ֆ. Ուիլսոնը նկարագրել է Աստծո սերը.

«Աստված չի նայում արտաքինին: Ես հավատացած եմ, որ նրան չի անհանգստացնում, արդյոք մենք ապրում ենք ամբողջում, թե տնակում, արդյոք մենք գեղեցիկ ենք, թե անբարետես, արդյոք մենք հայտնի ենք, թե մոռացված: Թեև մենք անթերի չենք, Աստված սիրում է մեզ ամբողջությամբ: Թեև մենք անկատար չենք, Աստված սիրում է մեզ կատարելապես: Թեև կարող ենք մեզ մոլորված ու անպարփակ զգալ, Աստծո սերը պարփակում է մեզ ամբողջությամբ:

Նա սիրում է մեզ, քանի որ լցված է անսահման սուրբ, մաքուր և աննկարագրելի սիրով: Մենք կարևոր ենք Աստծո համար ոչ թե մեր նվաճումների, այլ նրա համար, որ Նրա զավակներն ենք: Նա սիրում է բոլորիս անհատապես» («Աստծո սերը», հոկ. 2009 թվականի գերագույն համաժողով):

Աստված սիրում է բոլորիս: Նա սիրում է և տարբեր հավատքի մարդկանց, և հավատք չունեցողներին: Նա սիրում է տառապյալներին: Նա հավասարապես սիրում է և՛ հարուստներին, և՛ աղքատներին: Նա սիրում է բոլոր ռասսաների և բոլոր մշակույթների մարդկանց՝ թե՛ ամուսնացած, թե՛ ամուրի և թե՛ այն մարդկանց, ովքեր հակվածություն են զգում նույն սեռի հանդեպ կամ իրենց նույնասեռական, լեսբուի կամ երկսեռական են համարում: Եվ Աստված ակնկալում է, որ հետևենք Նրա օրինակին:

Մեզ պատվիրված է սիրել Աստծուն և միմյանց

«Միրիր քո Տեր Աստծուն քո բոլոր սրտովը քո բոլոր անձովը և քո բոլոր մտքովը: Սա է առաջին և մեծ պատուիրանքը: Երկրորդն էլ սորան նման. Միրիր քո ընկերին քո անձի պես» (Մատթեոս 22.36-39):

«Սա է իմ պատվիրանքը, որ իրար սիրեք, ինչպես որ ես ձեզ սիրեցի» (Հովհաննես 15.12):

Աստծո հանդեպ սերը մենք արտահայտում ենք Նրա պատվիրանները պահելով (տես Հովհաննես 14.15) և միմյանց սիրելով (տես Հովհաննես 13.34): Եթե ընտանիքի անդամ կամ ընկեր ունեք, ով հակվածություն է զգում նույն սեռի հանդեպ կամ իրեն նույնասեռական է համարում, սիրեք նրան: Նախագահ Հենրի Բ. Այրինգը նկատել է.

«Եթե դուք ցանկանում եք մոտենալ ինչ-որ մեկին, ով թանկ է ձեզ համար, բայց հեռու եք նրանից, դուք գիտեք ինչպես անել այդ: Դուք կփորձեք խոսել նրա հետ, կլսեք նրան և ուղիներ կգտնեք միմյանց համար ինչ-որ բան անելու համար: Որքան հաճախ դա պատահի և կրկնվի, այնքան խորը կլինի կապվածությունը: Եթե ժամանակի մեծ մասն անցնի առանց խոսելու, լսելու և գործեր անելու, կապը կթուլանա: Աստված կատարյալ է և ամենագոր, իսկ դուք և ես մահկանացու ենք: Բայց նա մեր Հայրն է, Նա սիրում է մեզ և առաջարկում է Իրեն մոտենալու նույն հնարավորությունը, ինչը կաներ սիրող ընկերը: Եվ դուք կանեք դա գրեթե նույն ձևով. խոսելով, լսելով և անելով» («To Draw Closer to God», Apr, 1991 գերագույն համաժողով):

Ցույց տվեք ձեր սերը Աստծու հանդեպ՝ սիրելով և ծառայելով ուրիշներին: «Եվ ահա, ես ասում եմ ձեզ այս բաները, որ դուք կարողանաք իմաստություն սովորել. որ դուք կարողանաք սովորել, որ երբ դուք ձեր մերձավորների ծառայության մեջ եք, դուք սուսկ ձեր Աստծո ծառայության մեջ եք» (Մոսիա 2.17):

Ի՞նչ է նշանակում սիրել միմյանց: Մերը հոգատար է: Մերը լսում է: Մերը ընդգրկող է: Մերը ոգեշնչող է: Մերը մեզ բնորոշում է որպես մարդկային էակ, քանի որ մենք Աստծո զավակներն ենք, իսկ «Աստված սեր է» (Ս Հովհաննես 4.8): Վերջին ընթրիքին Փրկիչն ասել է. «Մորանով կգիտենան ամենքը, թե իմ աշակերտներն եք, եթե իրար վրա սեր ունենաք» (Հովհաննես 13.35):

Միմյանց սիրելու պատվիրանը ներառում է նրանց, ովքեր չեն կիսում մեր աշխարհայացքը: Ինչպես Երեց Դավիթն Հ. Օուքսն է բացատրել.

«Կյանքի շատ հարաբերություններում և պայմաններում մենք պետք է շփվենք մարդկանց հետ, ովքեր տարբերվում են մեզանից: Կարևոր է, որ մեր կողմից այս տարբերությունները չմերժվեն կամ անտեսվեն, սակայն որպես Քրիստոսի հետևորդներ մենք պետք է սովորենք խաղաղ ապրել ուրիշների հետ, ովքեր չեն կիսում մեր արժեքները կամ ընդունում ուսմունքները, որոնց վրա դրանք հիմնված են: Հոր փրկության ծրագիրը, որի մասին մենք գիտենք մարգարեական հայտնությամբ, դնում է մեզ մահկանացու պայմաններում, որտեղ մենք պետք է պահենք Նրա պատվիրանները: Դա ներառում է՝ տարբեր մշակույթներ և համոզմունքներ ունեցող մեր մերձավորներին սիրել այնպես, ինչպես Նա սիրեց մեզ: Ինչպես ուսուցանել է Մորմոնի Գրքի մի մարգարե, մենք պետք է առաջ մղվենք՝ ունենալով «սեր Աստծո հանդեպ և բոլոր մարդկանց հանդեպ» (2 Նեփի 31.20)» («Միրել ուրիշներին և ապրել տարբերություններով հանդերձ», հոկ. 2014 գերագույն համաժողով):

Աստվածային սերը չի արդարացնում մեղք գործելը. «Քանզի, ես՝ Տերս, չեմ կարող մեղքը նվազագույն աստիճանով թույլատրելի համարել. Այնուամենայնիվ, նա, ով ապաշխարում և կատարում է Տիրոջ պատվիրանները, պիտի ներվի» (ՎևՈՒ 1.31–32): Նմանապես, մենք պետք է անզիջում լինենք, ապրելով և պաշտպանելով Աստծո պատվիրանները, սակայն Աստծո

սերը լիարժեք արտացոլելու համար, մենք պետք է նաև սիրենք միմյանց այնպիսի անկեղծ ու ամբողջական սիրով, որ ոչ ոք իրեն լքված, միայնակ կամ հուսալքված չզգա:

Փրկիչը կատարելապես հասկանում է մեր բոլոր դժվարությունները

«Որովհետև հիմա հայելու մեջ օրինակով ենք տեսնում, բայց այն ժամանակ դեմադեմ. Հիմա փոքր ի շատե եմ տեղեակ, բայց այն ժամանակն այնպես կգիտենամ՝ ինչպես գիտեցուած եմ» (Ա Կորնթացիս 13.12):

Որպես մահկանացու էակներ, մեր հասկացողությունը սահմանափակ է: Արձագանքելով Նեփիին, մենք կարող ենք հայտարարել. «գիտեմ, որ նա սիրում է իր զավակներին. սակայն չգիտեմ բոլոր բաների իմաստը» (1 Նեփի 11:17):

Մեր կյանքի ճամփորդության համար պատասխաններ և ուղղություն փնտրելիս մենք կարող ենք ապավինել Աստծուն և Հիսուս Քրիստոսի քավիչ զոհաբերության հատուկ զորությանը: Երբ Հիսուս Քրիստոսը իր վրա վերցրեց աշխարհի մեղքերը, Նա կրեց ամեն ցավ ու չարչարանք, որ մարդ երբևէ տարել է.

«Եվ նա պիտի գնա առաջ՝ տանելով ցավեր և չարչարանքներ, և փորձություններ ամեն տեսակի. և այս՝ որպեսզի խոսքը կարողանա իրագործվել, որն ասում է. նա վեր կառնի իր վրա իր ժողովրդի ցավերն ու հիվանդությունները» (Սլմա 7.11):

Նույն սեռի հանդեպ հակվածություն զգալը մեղք չէ, և մենք կարող ենք կառավարել այդ զգացումները

Եկեղեցին դիրքորոշում չունի նույն սեռի հանդեպ հակվածության պատճառների վերաբերյալ: 2006 թվականին Երեց Դավիին Հ. Օուքսը հայտարարել է.

«Եկեղեցին դիրքորոշում չունի նման տրամադրվածությունների կամ հակումների, այդ թվում նաև նույն սեռի հանդեպ հակվածության պատճառների վերաբերյալ» (2006 թվականին հարցազրույց Երեց Դավիին Հ. Օուքսի և Երեց Լանս Բ. Վիկմանի հետ. «Same-Gender Attraction»):

Նույն սեռի հանդեպ հակվածություն զգալը մեղք չէ: Երեց Մ. Ռասսել Բալլարդը հայտարարել է.

«Եկեք պարզ արտահայտվենք. Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին հավատացած է, որ «նույն սեռի հանդեպ հակվածություն զգալը բարդ իրողություն է շատ մարդկանց համար: Ինքնին համակրանքը մեղք չէ, բայց եթե վերածվում է գործողության, ապա մեղք է: Չնայած համակրանքը կարող է առաջանալ անկախ մարդու ցանկության, մարդը ինքն է ընտրում՝ ինչպես արձագանքել այդ զգացմունքին: Եկեղեցին սիրով և ըմբռնմամբ ձեռք է մեկնում Աստծո բոլոր զավակներին, այդ թվում նաև [նույն սեռի հանդեպ հակվածություն զգացողներին]» («The Lord Needs You Now!» Ensign, Sept. 2015, 29):

Չնայած նույն սեռի հանդեպ հակվածությունը մեղք չէ, այն կարող է դժվար հաղթահարելի լինել: Չնայած մարդը կարող է անկախ իրենից նման զգացումներ ունենալ, նա կարող է պարտավորություն վերցնել պահելու Աստծո պատվիրանները: Ծնողը, ում երեխան նույն սեռի հանդեպ հակվածություն է զգում կամ իրեն նույնասեռական է համարում, պետք է ընտրի սիրել և ընդունել այդ երեխային: Որպես Եկեղեցու անդամների համայնք, մեր ընտրությամբ պետք է հյուրընկալ համայնք ստեղծենք:

«Եվ նա հրավիրում է նրանց բոլորին՝ գալ իր մոտ և ճաշակել իր բարությունից. և նա չի մերժում ոչ մեկին, որ գալիս են դեպի իրեն . . . բոլորը նույնն են Աստծո համար» (2 Նեփի 26.33):

Աստծո օրենքներով ապրող մարդիկ կարող են լիարժեք մասնակցություն ունենալ Եկեղեցում

«Ճշմարտութեամբ հասկանում եմ, որ Աստուած աչառ չէ» (Գործք 10.34):

Աստված խոստանում է, որ Եթե մենք հնազանդվենք Նրա օրենքներին, մենք կունենանք հավերժական ուրախություն, իսկ Նա միշտ պահում է Իր խոստումները: Ակնհայտ է, որ մարդիկ, ովքեր նույն սեռի հանդեպ հակվածություն են զգում կամ իրենց նույնասեռական են համարում, կարող են Աստծուն խոստումներ տալ և պահել: Նրանք կարող են քայլել Նրա լույսի մեջ: Նրանք կարող են լիարժեք մասնակցություն ունենալ Եկեղեցում:

«Եթե եկեղեցու անդամները նույն սեռի հանդեպ հակվածություն են զգում, սակայն սեռական ոչ մի արարք թույլ չեն տալիս, դեկավարները պետք է նեցուկ լինեն և քաջալերեն նրանց վճռականությունը՝ ապրելու մաքրաբարոյության օրենքով և կառավարելու անբարո մտքերը: Այդ անդամները կարող են Եկեղեցական կոչումներ ստանալ: Եթե նրանք արժանի են և պատրաստ են բոլոր մյուս առումներով, ապա նրանք կարող են նաև տաճարային երաշխավորագիր կրել և տաճարային արարողություններ ստանալ» (*Handbook 2: Administering the Church, 21.4.6*):

Նախագահ Գորդոն Բ. Հինքլին նշել է.

«Մենք սիրում ենք նրանց որպես Աստծո որդիներ և դուստրեր: Նրանք կարող են ունենալ որոշակի հակումներ, որոնք շատ ուժեղ են և դրանք դժվար է վերահսկել: Շատ մարդիկ տարբեր ժամանակներում ունենում են այս կամ այն հակումը: Եթե նրանք չեն տրվում այդ հակումներին, ապա կարող են առաջ գնալ, ինչպես եկեղեցու մյուս բոլոր անդամները: Եթե նրանք խախտում են մաքրաբարոյության օրենքը և եկեղեցու բարոյական չափանիշները, ապա նրանք, մյուսների նման, ենթակա են եկեղեցու կարգապահական գործընթացին» («What Are People Asking about Us?» Oct. 1998 general conference):

Ինչպիսին էլ որ լինեն հանգամանքները, մարդը կարող է ներդրում ունենալ Տիրոջ գործում ներկայումս և կարող է ակնկալել, որ իր հավատարմությունը կբերի միևնույն օրհնությունները՝ այժմ և հետայսու, որոնք Աստված խոստացել է նրանց, ովքեր նույն կերպ հավատարիմ են: Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնը նկատել է.

«Ամեն ոք պարզևներ ունի. ամեն ոք տաղանդներ ունի, ամեն ոք կարող է ներդրում ունենալ աստվածային ծրագրի իրականացմանը յուրաքանչյուր սերնդում: Շատ լավ բաների, շատ խիստ անհրաժեշտ բաների, նույնիսկ երբեմն ամեն բանի, որ անհրաժեշտ է այս պահին, կարելի է հասնել ոչ կատարյալ պայմաններում: Ձեզանից շատերն անում են այն, ինչ հնարավոր է: Եվ երբ դուք, ովքեր տանում եք մահկանացու կյանքի ամենաձանր բեռները, կանգնում եք պաշտպանելու Աստծո ծրագիրը, որպեսզի Նրա զավակները վեհացման հասնեն, մենք բոլորս պատրաստ ենք վճռական քայլերով առաջ ընթանալու: Մենք վստահաբար վկայում ենք, որ Հիսուս Քրիստոսի Քավությունը նախատեսել է և, ի վերջո, կփոխհատուցի բոլոր զրկանքները և կորուստները նրանց համար, ովքեր դառնում են դեպի Նա: Ոչ մեկի համար նախասահմանված չէ, որ ավելի քիչ ստանա, քան այն ամենը, ինչ Հայրն ունի Իր զավակների համար» («Ինչո՞ւ ամուսնություն, ինչո՞ւ ընտանիք», 2015 զերագույն համաժողով):

Մաքրաբարոյության օրենքը վերաբերում է Աստծո բոլոր զավակներին:

Մեռական անարատությունը Աստծո ծրագրի էական մասն է մեր երջանկության համար: Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Քվորումը հայտարարել է.

«Առաջին պատվիրանը, որն Աստված տվեց Ադամին ու Եվային, վերաբերում էր որպես ամուսին և կին նրանց ծնող դառնալու հնարավորությանը: Մենք հայտարարում ենք, որ դեռևս ուժի

մեջ է Իր զավակներին տված շատանալու և երկիրը լցնելու վերաբերյալ Աստծո պատվիրանը: Մենք հայտարարում ենք նաև, որ որդեծնության սրբազան գործությունը, Աստծո պատվիրանի համաձայն, պետք է օգտագործվի միայն այն տղամարդու և կնոջ միջև, որոնք օրինական ձևով ամուսնացած են որպես ամուսին և կին» («Ընտանիք. հայտարարություն աշխարհին»):

Չամուսնացած տղամարդու և կնոջ կամ նույն սեռի մարդկանց միջև սեռական հարաբերությունը մեղք է և խախտում է մեր Երկնային Հոր կարևորագույն օրենքներից մեկը և խոչընդոտում է հավերժական առաջընթացի մեր ճանապարհը:

«Տիրոջ մաքրաբարոյության օրենքն է՝ սեռական զավածություն, օրինական ամուսնությունից դուրս և հավատարմություն՝ ամուսնության մեջ: Սեռական հարաբերությունները պատշաճ են միայն այն տղամարդու և կնոջ միջև, ովքեր իրավական և օրինական ձևով ամուսնացած են որպես ամուսին և կին: Շնությունը, պոռնկությունը, նույն սեռի հետ սեռական հարաբերությունները և ցանկացած այլ անսուրբ, անբնական կամ անմաքուր սեռական գործողություն մեղք է» (*Handbook 2: Administering the Church, 21.4.5*):

Ապաշխարությունը և Աստծո հետ հաշտությունը հնարավոր է սեռական ցանկացած կողմնորոշում ունեցող մարդու համար, ով խախտել է մաքրաբարոյության օրենքը:

«Շնություն մի արա. իսկ նա, ով շնություն է անում և չի ապաշխարում, դուրս պիտի գցվի: Բայց նրան, ով շնություն է անում և ապաշխարում է իր ողջ սրտով, և թողնում է այն և այլևս չի անում, դու պիտի ներես» (Վարդապետություն և Ուխտեր 42.24–25):

Հաճախակի տրվող հարցեր

Հոկտեմբերի 25, 2016

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՁԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

Կայքի անվանումը. mormonandgay.lds.org

Ինչո՞ւ եք օգտագործում «Նույն սեռի հանդեպ հակվածություն» եզրը: Ինչո՞ւ չեք օգտագործում «նույնասեռական» եզրը:

Նույն սեռի հանդեպ հակվածությունը (ՆՍՀ) վերաբերում է նույն սեռի անձի հանդեպ առկա հուզական, ֆիզիկական, ռոմանտիկ կամ սեռական հրապուրանքին: Եթե մարդը նույն սեռի հանդեպ հակվածություն է զգում, նա ընտրություն ունի՝ սեռական կողմնորոշման պիտակ վերցնել, թե իրեն այդպիսին չհամարել: Երկու դեպքում էլ նույն սեռի հանդեպ հակվածությունը տեխնիկական եզր է, որն առանց պիտակավորելու նկարագրում է տվյալ փորձությունը: Մույն վեբ կայքն օգտագործում է այդ եզրը, որպեսզի ընդգրկի այն մարդկանց, ովքեր անհարմար են զգում պիտակ կրել, չանտեսելով նույնասեռական տղամարդկանց և կանանց, ինչպես նաև երկսեռական անհատների գոյությունը:

Ինչո՞ւ այս վեբ կայքում չի քննարկվում սեռական դիստրոֆիայի կամ սեռափոխության հարցերը:

Այս կայքում քննարկվող ընդհանուր սկզբունքները (օրինակ՝ մարդկանց չմեկուսացնելը և բարությանը վերաբերվելը) կիրառելի են սեռական դիստրոֆիա ունեցող կամ սեռափոխություն կատարած Վերջին Օրերի Սրբերի համար: Մակայն նույն սեռի հանդեպ հակվածությունը և սեռական դիստրոֆիան մեծապես տարբերվում են: Օրինակ՝ սեռական դիստրոֆիա ունեցող մարդիկ միշտ չէ, որ հակվածություն են զգում նույն սեռի հանդեպ, իսկ նույն սեռի հանդեպ հակվածություն զգացող մարդկանց մեծամասնությունը սեռը փոխելու նպատակ չունի: Ե՛վ հոգեբանական, և՛ սպասավորման տեսանկյունից, երկուսը տարբերվում են:

Ձեզ մոտ կասկած առաջանո՞ւմ է, թե դուք նույնասեռական եք:

Եթե ձեզ մոտ կասկած է առաջանում, որ գուցե դուք նույնասեռական եք, հավանական է, որ դուք նույն սեռի հանդեպ հակվածություն եք զգում և չզիտեք ինչով բացատրել այդ զգացմունքները: Սեռական ցանկությունները բարդ են և պայմանավորված են բազմաթիվ գործոններով: Չնայած որ ռոմանտիկ, հուզական կամ սեռական հակվածությունը կարող է սեռական կողմնորոշման նշան լինել, դուք չպետք է ինքնաբերաբար ենթադրեք, որ դա այդպես է: Սեռական զգացումը անկայուն է և փոխվելու հատկություն ունի: Կասկածի առաջացումը չպետք է ձեզ պարտադրի, ոչ էլ շտապեցնի ձեզ եզրակացություն անել ձեր սեռային հատկանիշների վերաբերյալ:

Տարբեր մարդիկ բառերը տարբեր իմաստով են գործածում և կյանքի ընթացքում տվյալ բառի իմաստը կարող է փոխվել: Ի՞նչ նշանակությամբ եք դուք օգտագործում

նույնասեռական բառը: Դուք նկատի ունեք զգացումներ, ինքնություն, կենսակերպ: Հասարակական և մշակութային փոփոխություններին զուգահեռ *նույնասեռական* բառը ևս տարբեր իմաստներ է ձեռք բերել: Նույնասեռական կոչվելը կարող է նշանակել, որ մարդը նույն սեռի հանդեպ հակվածություն է զգում, բայց կառավարում է այդ զգացմունքները: Կամ զուցե այդ պիտակը նկարագրում է ձեր հուզական, ֆիզիկական, սեռական կամ քաղաքական դրսևորումը: Եթե ձեզ պարզ չէ, թե ինչ նկատի ունի մարդը, երբ ասում է՝ «Ես նույնասեռական եմ», պարզապես հարցրեք նրան:

Պե՞տք է արդյոք, որ ես այդ մասին բարձրաձայնեմ:

Միևնույն սեռի հանդեպ հակվածությունը գաղտնի պահելը ումանց կարող է բերել ամոթի կամ բացասական ներքին երկյխոսության: Վստահելի մարդու հետ այդ զգացմունքներով կիսվելը կարող է ազատարար և բուժիչ լինել: Ինչևէ, կան մարդիկ, ովքեր ավստում են, որ ավելի երկար չեն սպասել կամ չեն սահմանափակել մարդկանց թիվը, ում բացահայտել են իրենց զգացումները, այնպես որ զգացումները հրապարակավ «բարձրաձայնելու» կամ բացահայտ նույնասեռական համարվելու որոշումը չպետք է ճնշման ներքո լինի: Եթե որոշեք նույն սեռի հանդեպ հակվածությունը բացահայտել, աղոթքով խորհեք, թե ում հետ և ինչպես կցանկանայիք կիսվել ձեր մահկանացու կյանքի այդ կողմի մասին:

Եթե որոշեք կիսվել նույն սեռի հանդեպ հակվածության ձեր փորձությամբ կամ բացահայտ նույնասեռական համարվել, ապա թե՛ տանը, թե՛ եկեղեցում ձեզ պետք է սատար կանգնեն և բարությանմբ ու հարգանքով վերաբերվեն: Մինչ ձգտում ենք իրադրությունը հասկանալ, մենք բոլորս պետք է համբերատար լինենք միմյանց հանդեպ:

Որպես Եկեղեցու անդամներ, մենք բոլորս պետք է պատասխանատվություն զգանք՝ ստեղծելու սատարող և սիրող միջավայր մեր բոլոր եղբայրների և քույրերի համար: Օգնության այդպիսի միաբանությունը շատ ավելի հեշտացնում է ավետարանով ապրելը և Հոգին փնտրելը, մահկանացու կյանքի բոլոր կողմերը կառավարելիս:

Ինչպե՞ս կարող եմ խոսել ծնողներիս կամ եպիսկոպոսի հետ նույն սեռի հանդեպ հակվածության վերաբերյալ:

Եթե հանգիստ եք զգում խոսելու ծնողի, ընտանիքի մեկ այլ անդամի կամ եկեղեցու ղեկավարի հետ, ապա մտածեք, որ նրանց հետ կիսվեք ձեր զգացումներով: Օգնեք նրանց հասկանալ, թե ինչի միջոցով եք դուք անցնում, թույլ տալով, որ սեր ցուցաբերեն և սատարեն ձեզ: Եթե նրանք ծանոթ չեն նմանատիպ փորձառությանը, խնդրեք նրանց կարդալ այս կայքի նյութերը: Հավանաբար, հեշտ չի լինի նման գրույց սկսելը, սակայն նման երկյխոսությունը կարևոր է: Համբերատար եղեք ձեր շրջապատի մարդկանց հետ և հիշեք՝ դուք բոլորդ միասին սովորում եք: Եթե ձեր հարազատները դժվարանում են հասկանալ կամ սատարել ձեզ, հնարավոր է, նրանք ունեն ձեր օգնության կարիքը: Ձեր ծնողներին և ղեկավարներին վերաբերվեք նույն բարությանմբ, ինչ նրանցից եք ակնկալում: Այս կայքը նախատեսված է բոլորին օգնելու, որ ավելի լավ հասկանան նույն սեռի հանդեպ հակվածությունը ավետարանի տեսանկյունից:

Եթե հավատքին հավատարիմ մնամ, իմ հակվածությունը կվերանա՞:

Նույն սեռի հանդեպ հակվածությունը չի չափվում ձեր հավատարմությամբ: Շատ մարդիկ տարիներով են աղոթում և ամեն ինչ անում, որ հնազանդ լինեն, սակայն նույն սեռի հանդեպ հակվածությունը չի անցնում: Նույն սեռի հանդեպ հակվածության ինտենսիվությունը նույնը չէ բոլորի մոտ: Ոմանք երկու սեռի հանդեպ էլ հակվածություն ունեն, իսկ մյուսները հակվածություն են զգում բացառապես նույն սեռի հանդեպ: Ոմանց մոտ նույն սեռի հանդեպ հակվածության

զգացմունքները կամ առնվազն դրանց ինտենսիվությունը ժամանակի ընթացքում կարող է նվազել: Ցանկացած դեպքում՝ թե՛ ծնողները, թե՛ ղեկավարները, որպես արդյունք, չպետք է հակվածության փոփոխություն ակնկալեն կամ պահանջեն:

Հնարավոր է, դուք չկարողանաք կառավարել ձեր հակվածության ինտենսիվությունը, սակայն դուք կարող եք կառավարել ձեզ և չտրվել գործողությունների: Աղոթելով Տիրոջը, դուք կօգնեք ձեզ կենտրոնանալ կառավարելի հնարավոր արդյունքի վրա և իմանալ, թե ինչ կարող եք սովորել այդ փորձությունից և ինչպես կարող է այն ձեզ ուժ տալ: Ձեր կյանքը Աստծուն դարձնելը հավատքի կարևոր գործողություն է, որը մեծ օրհնություններ է բերում այժմ և նույնիսկ ավելի մեծ օրհնություններ՝ գալիք աշխարհում:

Արդյո՞ք Եկեղեցին երբևէ կփոխի իր վարդապետությունը, որ հավանություն տա նույն սեռի ամուսնություններին:

Տղամարդու և կնոջ միջև ամուսնության վարդապետությունը առանցքային դեր ունի Աստծո ծրագրում, Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու ուսմունքների անբաժանելի մասն է և փոփոխության ենթակա չէ:

«Եկեղեցին հաստատում է, որ տղամարդու և կնոջ միջև ամուսնությունը՝ որպես սուրբ գրություններով հիմնված վարդապետական սկզբունք, էական է Իր զավակների հավերժական ճակատագրի համար նախատեսված Արարչի ծրագրում:

Մեռական հարաբերությունները պատշաճ են միայն այն տղամարդու և կնոջ միջև, ովքեր իրավական և օրինական ձևով ամուսնացած են որպես ամուսին և կին: Մեռական հարաբերությունները մյուս բոլոր դեպքերում, այդ թվում՝ նույն սեռի անձնավորությունների միջև, մեղք է և քայքայում է աստվածայնորեն ստեղծված ընտանիքի հաստատությունը: Ուստի, Եկեղեցին պնդում է, որ ամուսնությունը սահմանվում է որպես իրավական և օրինական միություն մի տղամարդու և մի կնոջ միջև» (*Handbook 2: Administering the Church, 21.4.10*):